

կէս կէս զուռուշ տվին. այլոցն մէկ մէկ ու-
ռուկ էառ. ապա եթող զմեզ : Ապա վեց հոգի
մեռաւ անզ վասն զժուարութեան ճանապար-
հին եւ քարուտ լինելոյն . եւ մի վասն սաստիկ
չողոյն . եւ մի վասն սլասկման եւ ծարաւման . 65
եւ բերեալ թաղեցաք ի ջառներն . եւ էր մինն
քահանայ ծերունի :

ԲԵԹՂԵՀԷՄ

Եւ ի Ծննդեան օրն տարաւ զմեզ առաջ-
նորդն ի Բեթղէհէմ ի սուրբ Ծնունդն Քրիս-
տոսի, որ երկու մզոն հեռի էր յԵրուսաղէ- 70
մայ . որ եւ երեւէր եկեղեցին : Եւ ի կէս ճա-
նապարհին հանդիպեցաք Գերեզմանին Հոա-
քէլի, որ լայր վասն որդոցն կոտորոյ եւ ոչ
կամէր միտթարել : Եւ անտի զնացեալ ի
Ծնունդն մեծ եւ զարմանաչէն . վերեն արծը- 75
ճած, մէջն զեղեցիկ մարմարէ աներ . բայց
այրն, յորում ծնաւ Քրիստոս՝ Փոանկաց
ձեռքն է . խնդրեցաք, բացին, զարդարեցին,
մոմ եւ կանթեղ լուցին, զմեզ հրամեցէք ա-
րին . մտաք, աղօթեցաք, սլառարագ եղաւ . 80
մեզ եւ մեր ծնողաց մեղաց թողութիւն խըն-
դրեցաք, ժամուց տվաք ըստ կարեաց : Եւ
ելաք անտի, մեր վանքն զնացաք, մերձ սուրբ
Ծննդեան, որ էր մեծ եւ ընդարձակ տեղի .
ապա ամայի էր եւ աւեր յանխնամ սահողաց . 85
որ եւ կործանեալ էր . միայն քանի մն խուց
կայր . իսկ եկեղեցի եւ այլն փլած, զոր Պարոն
տէրն նոր շինել սկսել էր . քանզի եւ անզր ժի-